

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

20.06.2014

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն այցելել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և հանդիպում ունեցել Ն. Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ:

Վեհարանում կայացած հանդիպմանը մասնակցել են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Կոտայքի թեմի առաջնորդ Տեր Առաքել արքեպիսկոպոս Քարամյանը, ինչպես նաև մարզպետարանի պաշտոնատար անձինք:

Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն արժանացել է Վեհափառ Հայրապետի օրհնությանն ու շնորհավորանքին, այնուհետև քննարկվել են մարզում հոգևոր գործունեությանը վերաբերող մի շարք հարցեր:

Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն ու թեմակալ առաջնորդ Տեր Առաքել արքեպիսկոպոս Քարամյանը հանդիպման ընթացքում ներկայացրել են մարզի հոգևոր և աշխարհիկ հատվածների համագործակցության ուղղությամբ իրենց կողմից մշակված ծրագրերը, ինչպես նաև անդրադարձ կատարել քրիստոնեական դաստիարակությանը, քարոզչությանը, եկեղեցաշինությանը միտված և կազմակերպական բնույթի այլ հարցադրումների: